

## ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓԼԱՅԱՏՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԿԱԶՄԸ

### Բորիս ԱՎԱԳՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

Բանալի բառեր. գործարար միջավայր, ինստիտուտներ, տնտեսական համակարգ, տնտեսավարող սուբյեկտ, Doing Business, գնահատման ցուցանիշ, համաթիվ

Տնտեսական հարաբերությունների կարգավորման նպատակով ստեղծված ինստիտուտները ձևավորում են տնտեսական համակարգի հիմնական մասը (կարկասը), որի միջոցով գործում են տնտեսավարող սուբյեկտները, իրենց արտադրա-ֆինանսական գործունեությունը տեղավորելով ինստիտուտների կողմից ձևավորված շրջանակներում: Տնտեսական կյանքի իրագործման համար այդ պայմանների կայացումը, իր հերթին գործարար միջավայրին թելադրում է այն մեխանիզմը, որի պահպանումը պարտադիր է դառնում “տնտեսական դաշտում” գործող սուբյեկտների համար: Ըստ որում իրենց տնտեսական գործունեության իրականացման նպատակով տնտեսավարող սուբյեկտները միմյանց հետ մտնում են ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայաց կապերի մեջ: Նման կապերի ձևավորումը պայմանավորված է առաջին հերթին արտադրական-տեխնոլոգիական առանձնահատկություններով, թողարկված արտադրանքի բնույթով և նշանակությամբ, այն իրացնելու շուկաների մեծությամբ, գործող դրամավարկային և հարկաբյուջետային կարգավորման մեթոդներով և այլ հանգամանքներով:

Տնտեսության պետական կարգավորման արդյունավետության բնութագրման և տնտեսավարող սուբյեկտների գործունեության իրականացման լիարժեք պատկերն ունենալու համար կարևոր է դառնում նրանց գործունեության բոլոր կողմերը բնութագրող և ընդգրկող այն ցուցանիշների համակարգի ընտրությունը, որը բավարարում է իրապես տնտեսական կյանքին հետևելու և այն կառավարելու պահանջին: Այս տեսանկյունից տնտեսության կարգավորման զինանոցն ունի տարբեր գործիքակազմեր, որոնք ժամանակի ընթացքում փոփոխվում և համալրվում են նոր, ավելի կատարելագործված ցուցանիշներով կամ դրանց ամբողջությամբ, ինչը հնարավոր է դարձնում ավելի “նոտիկից” և լիարժեք պատկերացնել տնտեսական կյանքի իրավիճակը: Այլ կերպ ասած ինստիտուտները, իրենց մեջ ներառելով ցուցանիշները կամ դրանց համակարգը, այն “ջերմաչափը” կամ “բարոմետրն” են, որոնք նախ ձևավորում են տնտեսական խաղի կանոնները և, երկրորդ, հետադարձ կապի սկզբունքով պետք է “կառավարողներին” տեղեկություններ հասցնեն տնտեսավարողների վարքագծի և դրանց փոփոխությունների մասին: Հաջորդ քայլը պետք է լինի հետադարձ կապի օգնությամբ ստացված

տեղեկությունների վերլուծությունը և ամփոփումն ու դրանից ելնելով համապատասխան որոշումների կայացումը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև խաղի կանոնների փոփոխությունները, որոնք կարող են ուղեկցվել տարբեր տեսակի միջոցառումների և դրանց ծրագրերի, օրենսդրական դաշտի կատարելագործումներին ուղղված գործողությունների իրականացմամբ: Այս համատեքստում կարևոր է դառնում “կարգավորող-տնտեսավարող սուբյեկտ” հարաբերությունների ուղղակի և հետադարձ կապի արագության ապահովումը և համապատասխան (ադեկվատ) որոշումների կայացումը նպատակ ունենալով արագ արձագանքման եղանակով հասնել տնտեսական մեխանիզմում տեղ գտած թերությունների և բացերի վերացմանը, դրանով իսկ ապահովելով ողջ համակարգի առաջընթացը և լավագույն վերջնական արդյունքների ձեռքբերումը:

Ներկայումս աշխարհի տարբեր երկրների տնտեսական կյանքում գործող ինստիտուտների կիրառման հիմնական խնդիրներից մեկը դրանց այնպիսի համակարգի ձևավորումն է, որը նախ առավել լիարժեք է ընդգրկում տնտեսավարող սուբյեկտների (ձեռնարկությունների կամ առևտրային կազմակերպությունների) գործունեության հնարավորին բոլոր կողմերը և երկրորդ, ինչն անկասկած ավելի կարևոր և հնարավոր է դարձնում այդ համակարգի գնահատումը կամ չափումը, որպեսզի հնարավոր դառնա պատկերացում կազմելու տնտեսավարող սուբյեկտների վարքագծի և դրա փոփոխության մասին: Այդ համակարգին ներկայացվող հաջորդ պահանջն այն է, որ դրանք պետք է ընդունելի լինեն համաշխարհային հանրության կողմից, որպեսզի հնարավոր դառնա գնահատելու (չափելու) օգնությամբ կատարելու միջերկրային համեմատություններ, դրանով իսկ պարզելու այս կամ այն երկրի տեղը տարբեր ինստիտուտների կայացման գործում: Բացի այդ տնտեսավարող սուբյեկտների գործունեության և գործարար միջավայրի գնահատման համար միջերկրային համեմատությունները ցույց են տալիս նախ թե կարգավորման ինչ հիմնական ուղղություններով է շարժվում աշխարհը, ինչ տեղ է զբաղեցնում այդ ընթացքում այս կամ այն երկիրը, որ “տեղամասերում” է ետ մնում երկիրը և որոնք են այն “նեղ տեղերը”, որոնք հնարավորություն չեն տալիս գրավելու առաջատար դիրքեր:

Ակնհայտ է նաև, որ գործարար միջավայրն այն միջոցն է, որի օգնությամբ կարելի է ունենալ ինչպես “առողջ” ձեռնարկություններ, այնպես էլ այդ միջավայրի վատ զարգացած համակարգի պայմաններում գործ ունենալ անկենսակ և “թույլ” (հիվանդ) ձեռնարկությունների հետ: Այսինքն գործարար միջավայրն է ձևավորում լավ կամ վատ ձեռնարկություն: Այս պատճառով էլ գնահատելով գործարար միջավայրը կարելի է եզրակացնել, թե ինչպիսին է

ձեռնարկությունների վարքագիծը և, երկրորդ, ինչ քայլեր է անհրաժեշտ իրականացնել ձեռնարկատիրական միջավայրի բարելավման համար:

Ներկայումս առավել ընդունված է, որ գործարար միջավայրի գնահատման (չափման) համար կիրառելի է ցուցանիշների համակարգը: Այս հանգամանքը պայմանավորված է այն փաստարկով, որ գործարար միջավայրի կարգավորման առարկան բազմակողմ և բազմաշերտ է: Ուստի դժվար (կամ գործնականում անհնար է) մեկ ցուցանիշի օգնությամբ բնորոշել այդ համակարգը: Բացի այդ, մեկ ցուցանիշի կիրառությունը (այն հաճախ անվանում են չափանիշ, ամփոփ կամ ինտեգրալային ցուցանիշ) հնարավորություն չի տալիս պարզելու, թե որոնք են այն պատճառները, որոնք թույլ չեն տալիս ապահովելու զգալի սոցիալ-տնտեսական առաջընթաց: Ստացվում է, որ մեկ ցուցանիշի կիրառմամբ կարելի է պատկերացնել գործարար միջավայրի մակարդակի փոփոխության կամ ավելի ստույգ այդ երևույթի միտման (տրենդի) մասին, բայց ոչ ավելին: Մինչդեռ գործարար միջավայրի բազմաշերտության պատճառով այն գնահատելու ցուցանիշների համակարգի օգտագործումը միանգամայն արդարացված է: Իսկ եթե նկատենք, որ գործարար միջավայրի գնահատման յուրաքանչյուր “ինքնուրույն” ցուցանիշ ունի իր ենթացուցանիշները, ապա պարզ կդառնա, որ գործարար միջավայրի չափման և կարգավորման համար ցուցանիշների համակարգի կիրառումը միակ հնարավոր լուծումն է ստեղծված իրավիճակում:

Հաճախ այս կամ այն ցուցանիշի կամ դրա համակարգի ստեղծման և կայացման համար տարվող գիտական բանավեճերը և քննարկումները որոշակի արդյունքների կամ հետևանքների չեն հանգեցնում: Նույնիսկ, եթե գիտական որոշակիություն է մտնում այդ խնդրի լուծման գործում, այն դեռևս, թեև անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ կյանքում կիրառելու համար: Ուստի կարծում ենք տնտեսագիտական այս կամ այն հարցի քննարկման և առաջարկությունների մշակման գործում պետք է ելնել գործնական կյանքից, քանի որ այն լավագույն ապացույցն ու կռվանն է այս կամ այն տնտեսական հիմնախնդրի լուծման գործում: Մենք ելնում ենք այն փաստից, որ թեև ինչպես տնտեսագիտության տեսության մեջ առաջարկվել և համոզված ենք կառաջարկվեն նոր ցուցանիշներ և դրանց համակարգեր գնահատելու (չափելու) գործարար միջավայրը, սակայն մեր նպատակը ամենևին էլ դա չէ, այլ ելնելով արդեն իսկ լայն տարածում և կիրառում ստացած գործարար միջավայրի գնահատման և ներկայումս լայնորեն կիրառվող ցուցանիշների համակարգից վերլուծել և բնութագրել այդ միջավայրը աշխարհի երկրների տարբեր խմբավորումների համար: Խոսքը Համաշխարհային բանկի կողմից օգտագործվող “Doing Business” համակարգի մասին է: Մեր կողմից նման մոտեցումը արդարացվում է նաև այն հանգամանքով, որ

թեև ներկայումս սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատման (չափման) նպատակով կիրառվում են ավելի քան 20 համաթվեր, սակայն Համաշխարհային բանկը հիմնականում, հատկապես, իր գլխավոր աշխատանքում՝ “World Development indicators”-ում օգտագործում է գործարար միջավայրի ցուցանիշները<sup>1</sup>, իսկ առավել մանրամասն այդ ցուցանիշները աշխարհի շուրջ 190 երկրների համար լույս են տեսնում առանձին<sup>2</sup>: Կարևոր է նաև նկատել, որ ժամանակի ընթացքում “Doing Business”-ում ընդգրկված երկրների թիվը անընդհատ ավելանում է: Այսպես “Doing Business 2005”-ում ընդգրկված է եղել 145, “Doing Business 2008”-ում՝ 178, “Doing Business 2010”-ում՝ 183, “Doing Business 2012”-ում՝ 183, “Doing Business 2015”-ում՝ 189 երկիր: Պետք է նաև նկատել, որ “Doing Business”-ի համակարգը ևս գտնվել է փոփոխությունների և լրացումների գործընթացում: Այսպես, օրինակ, այդ համակարգի հիմնական ցուցանիշներից էր “Աշխատողների աշխատանքի ընդունումը և ազատումը”, որն իր հերթին գնահատվում էր հետևյալ ենթացուցանիշների միջոցով՝ աշխատանքի ընդունման համաթիվը (1), աշխատաժամերի ոչ ճկունության համաթիվը (2), աշխատանքից ազատելու դժվարության համաթիվը (3), զբաղվածության կայունության (ոչ ճկունության) համաթիվը (4) և աշխատանքից ազատելու ծախսերը (շաբաթներով) (5)<sup>3</sup>: Սակայն հաջորդ տարիների “Doing business”-ում այդպիսի ձևակերպմամբ ցուցանիշը բացակայում է: Կամ, եթե “միջազգային առևտուրը” ցուցանիշը “Doing Business 2005”-ում ընդհանրապես բացակայել է, ապա 2008-2011թթ.-ին այս ցուցանիշը գնահատվել է հետևյալ ենթացուցանիշներով. արտահանման համար անհրաժեշտ փաստաթղթերը (քանակը) (1), արտահանման ժամանակը (օրը) (2), արտահանման արժեքը (ծախսերը) (1 կոնտեյների համար՝ ԱՄՆ դոլար) (3), ներմուծման համար անհրաժեշտ փաստաթղթերի (քանակը) (4), ներմուծման ժամանակը (օր) (4), ներմուծման արժեքը (1 կոնտեյների համար՝ ԱՄՆ դոլար) (5)<sup>4</sup>: Իսկ “Doing Business 2012”-ում միջազգային առևտուրը գնահատելու համար օգտագործվել է 6 ցուցանիշ<sup>5</sup>, “Doing Business 2016”-ում՝ “Միջազգային առևտրի” ենթացուցանիշների քանակը հասց-

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, World Development Indicators. The World Bank.

<http://wdi.worldbank.org/table5.3>

<sup>2</sup> Doing Business 2016. Measuring Regulatory Quality and Efficiency. World Bank Group-ընդգրկված է աշխարհի 189 երկիր:

<sup>3</sup> Տե՛ս, օրինակ, Doing Business in 2005, Removing obstacles to Growth. p. 99. Doing Business 2008. Comparing Regulation in 178 Economics, p. 105.

<sup>4</sup> Տե՛ս, օրինակ, Doing Business 2010, Reforming through Difficult Times, p. 105.

<sup>5</sup> Տե՛ս, օրինակ, Doing Business in a more transparent world, 2012. The World Bank, IFC, p. 79.

վեց 12-ի<sup>6</sup>, առանց ՅԼԱ՝ հեռավորությունը լավագույն արժեքից, որը չափվում է 1-ից 100-ը միավորով: Ընդհանուր առմամբ, “Doing Business 2016”-ում օգտագործվում է 10 ազդեցացված (խոշորացված) ցուցանիշ: Նշված բոլոր խոշորացված ցուցանիշների համար կիրառվում է ՅԼԱ-ն, որը գործածության մեջ է դրվել 2015 թվականից<sup>7</sup>: Վերը նշված ազդեցացված (խոշորացված) ցուցանիշները և դրանց ենթացուցանիշների քանակը ունի հետևյալ պատկերը. 1. Գործարարություն սկսելը (4), 2. Շինարարության թույլտվությունների ձեռքբերումը (4), 3. Էներգետիկ համակարգին միանալու հնարավորությունը (4), 4. Սեփականության գրանցումը (3), 5. Վարկերի ստացումը (4), 6. Գործարանական բաժնետերերի (ներդրողների) պաշտպանվածությունը (3), 7. Հարկերի վճարումը (3), 8. Միջազգային առևտուրը (12), 9. Պայմանագրերի կիրառումը (4), 10. Անվճարունակության լուծումը (3): Այսպիսով, օգտագործվում է 44 ենթացուցանիշ: Ինչպես արդեն նշեցինք այդ ենթացուցանիշների թվի 27.3%-ը վերաբերում է միջազգային առևտրի բնութագրմանը և գնահատմանը: Համաշխարհային բանկի մասնագետների կողմից նման շահագրգիռ մոտեցումը կարծում ենք պատահականություն չէ և այն բացատրվում է միջազգային առևտրի, ինտեգրման հարաճուն դերով և այն լիարժեք բնութագրելու պահանջով:

Այսպիսով, կարող ենք ամրագրել, որ “Doing Business” համակարգը և դրանում ընդգրկված ինստիտուտները (ցուցանիշները) ժամանակի ընթացքում ենթարկվել են փոփոխությունների և կատարելագործումների՝ հաշվի առնելով ու ամփոփելով աշխարհի երկրների մեծ մասի գործարարության առաջավոր փորձը: Ներկայումս այդ համակարգը լավագույն միջոցն է՝ գործարար միջավայրը բնութագրելու և տնտեսավարող սուբյեկտների վարքագծին ու վարքագծի փոփոխություններին հետևելու համար:

---

<sup>6</sup> Տե՛ս, Doing Business 2016. Measuring Regulatory Quality and Efficiency. Comparing Business Regulation for Domestic Firms in 189 Economies, p. 185.

<sup>7</sup> Տե՛ս, Doing Business 2016. Measuring Regulatory Quality and Efficiency. Comparing Business Regulation for Domestic Firms in 189 Economies, p. 185.

### **Բորիս ԱՎԱԳՅԱՆ**

**Գործարար միջավայրի գնահատման ինստիտուտների համակարգը և կազմը**  
*Բանալի բառեր. գործարար միջավայր, ինստիտուտներ, տնտեսական համակարգ, տնտեսավարող սուբյեկտ, Doing Business, գնահատման ցուցանիշ, համաթիվ*

Համաշխարհային տնտեսության ինտեգրման և գլոբալացման պայմաններում, որի հիմնական բնութագրիչն արտադրության գործոնների ազատ տեղաշարժն է դեպի այն երկրներ և տարածաշրջաններ, որտեղ բարենպաստ է գործարար միջավայրը (ուստի և ավելի հեշտ է գործարարությամբ զբաղվելը), կարևոր է դառնում գործարար միջավայրի, որպես համակարգի, գնահատման և դրա մեջ մտնող ինստիտուտների նշանակությունը: Հեղինակի կարծիքով ներկայումս այդպիսի համակարգ է կիրառվում “Doing Business”-ում, որն անցել է միջազգային փորձի ուսումնասիրության երկար ճանապարհ և թույլ է տալիս բազմակողմանիորեն գնահատել գործարար միջավայրն ու ձեռնարկությունների վարքագիծը:

### **Boris AVAGYAN**

**The system and structure of the institutions for business environment assessment**

*Keywords: business environment, institutions, economic system, economic entity, "Doing Business", evaluating indicator, the index*

The free movement of factors of production is the mainstream of globalization process and the integration of countries into the world economy. Logically that factors of production flows and concentrated in the countries with the most favorable business environment, where it is easier to be engaged in business. This situation requires countries to pay particular attention to the assessment of the business environment and institutions which determine such environment. According to the author's opinion, these indicators are published annually by the "Doing Business", which summarizes the results of research carried out in a lot of years and allow a comprehensive assessment of the current business environment and behavior of entrepreneurs.

### **Борис АВАКЯН**

**Система и структура институтов для оценки состояния предпринимательской среды**

*Ключевые слова: предпринимательская среда, институты, экономическая система, хозяйствующий субъект, "Doing Business", индикатор оценки, индекс*

Свободное движение факторов производства является главным проявлением глобализации и интеграции стран в мировое хозяйство. Логика перетока факторов производства такова, что они концентрируются в странах с наиболее благоприятной средой, где легче всего заниматься предпринимательством. Такое положение дел требует, чтобы страны уделяли особое внимание оценке предпринимательской среды и институтам, определяющим состояние данной среды. По мнению автора статьи, таким индикатором может служить ежегодно публикуемый “Doing Business”, где обобщаются результаты исследований проводимых в течение большого количества лет, которые позволяют всесторонне оценить существующую предпринимательскую среду и поведение предпринимателей.